«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 99

«24» 07 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ակադեմիական ազնվության կարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____

(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____

(ստորագրություն)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

Տ Ն Օ Ր Ե Ն

ՀՐԱՄԱՆ N 32Ն

«26» 02 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ՊՈԱԿ-ի ակադեմիական ազնվության կարգը:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ ____________________

(ստորագրություն)

Հաստատված է

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի

2025 թ. «26 02» «____» N324 հրամանով

Ակադեմիական ազնվությունը սկզբունքների, կարողությունների և արժեքների ամբողջություն է, որը զարգացնում է անհատի ազնվությունը դասավանդման, ուսումնառության և գնահատման պրոցեսում:

Ակադեմիական ազնվության կարգը ուղղված է Գորիսի պետական քոլեջի բարի համբավի պահպանման, նրա վարչական, դասախոսական անձնակազմի, ինչպես նաև ուսանողների իրավունքների պաշտպանությանը:

1. Ակադեմիական ազնվության կարգի նպատակն է՝

- Ապահովել քոլեջի անձնակազմի ցանկացած անդամի համար արդարության և ազնվության մթնոլորտ, բացառել ցանկացած անազնիվ վարքագիծ՝ խթանելով սովորողի նկարագրի դրական որակների զարգացումը.
- Ձևավորել սկզբունքային, մտածող, հետազոտող, բանիմաց և լայնախոհ անհատներ, որոնք կարողանում են համարձակորեն արտահայտել իրենց մտքերը և հարգանքով են վերաբերվում այլ մարդկանց և նրանց ստեղծած արժեքներին.
- Ապահովել կրթության բարձր որակ՝ նպաստելով կրթության որակի և դասավանդման արդյունավետության բարձրացմանը.
- Սահմանել և ապահովել ակադեմիական ազնվությանը նպաստող խնդիրները, պահանջները և պայմանները,
- Կանխարգելել ակադեմիական անազնվության դեպքերը քոլեջում:

2. Ակադեմիական անազնվությունը բնորոշող վարքագծի դրսևորումներ

- **Գրագողությունը**. այլ անձանց հետազոտությունները, մտավոր աշխատանքները, մտքերը, կարծիքները որպես սեփական, ինքնուրույն աշխատանք ներկայացնելը և առանց հղումներ անելու օգտագործելը.
- **Գաղտնի համաձայնությունը**. երբ մի խումբ անձինք համաձայնության են գալիս մի շարք հարցերում՝

1. Ստուգողական և քննական աշխատանքների վերաբերյալ ինֆորմացիայի փոխանցում,
2. Ուսանողի փոխարեն ստուգողական կամ քննական աշխատանքների կատարում,
3. Մի ուսանողի ստուգողական կամ քննական աշխատանքի ներկայացնելը մեկ այլ ուսանողի կողմից որպես սեփական աշխատանք.

- **Կրկնօրինակում**. միևնույն աշխատանքը տարբեր գնահատումների ներկայացնելը
- **Նյութերի և փաստաթղթերի կեղծում**. պաշտոնական նյութերի կամ փաստաթղթերի անօրինական օգտագործում, վնասում, առորագրությունների կեղծում.

Այլ վարքային դրսևորում. դրանք են տեղեկատվական աղբյուրների դիտավորյալ քողարկումը, քննությունների ընթացքում անթույլատրելի միջոցների օգտագործումը, հուշարարությունը, արտագրությունը, արդյունքների խեղաթյուրումը, տարբեր փաստաթղթերի կեղծումը, կեղծ փաստաթղթերի ներկայացումը

Դասախոսի դերը ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- Մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի ստեղծման, մշակման և վերանայման գործընթացին. ուսանողներին ցույց տալ խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, հետազոտություններ անելու և տեղեկատվական գրագիտության հմտություններ ձեռք բերելու կարևորությունը.
- Ուսանողներին սովորեցնել ակադեմիական ազնվության պահպանման կարգը և մշակել որոշակի կարողություններ՝ դրանք պահպանելու համար.
- Սովորեցնել այլ բառերով վերաձևակերպել և արտահայտել ինչպես սեփական, այնպես էլ այլ մարդկանց մտքերը.
- Գնահատվող յուրաքանչյուր առաջադրանքից առաջ ուսանողներին տեղեկացնել էլեկտրոնային թույլատրելի սարքավորումների, բանաձևերի և գրքերի ցանկը.
- Հետևողականություն դրսևորել ակադեմիական անազնվության դեպքերի բացահայտման և կանխարգելման համար.
- Ուսումնասիրել հեղինակային իրավունքին վերաբերող հարցերը. մասնակցել ակադեմիական ազնվության վերաբերյալ քննարկումներին, դասընթացներին.
- Ծառայել որպես ակադեմիական ազնվության վարքագծի դրսևորման օրինակ.
- Ապահովել բազմաբնույթ առաջադրանքների և տարբերակների ստեղծումը՝ բացառելով նույն առաջադրանքը երկրորդ անգամ կիրառելու միտումը:
- Ուսանողներին դերը ակադեմիական ազնվության ապահովման գործում ուսումնասիրել ակադեմիական ազնվության քաղաքականության դրույթները
- Իրազեկ լինել, հարգանք դրսևորել և պահպանել այլ մարդկանց մտավոր սեփականությանը առնչվող հիմնարար պահանջները.
- Ցանկացած աշխատանք կատարելիս ընդունել և խստորեն հետևել էթիկական չափանիշներին. այլ հեղինակների աշխատություններից հատվածներ օգտագործելիս անպայման ներկայացնել որպես ուրիշի ուղղակի խոսք:
- Մեջբերումներ անելուց հետո ձևակերպել եզրակացություններ, որոնք բացառապես սեփական մտքի ընթացքի արդյունքն են:
- Հետազոտական աշխատանք, ռեֆերատ կամ հոդված գրելիս օգտագործել հղումներ, որոնցում նշվում են հեղինակը, աշխատությունը և որտեղից են վերցված մտքերը:
- Աշխատանքի վերջում պարտադիր ունենալ օգտագործված գրականության (էլեկտրոնային և տպագիր) ցանկ, որտեղ նշված կլինեն տեղեկատվական բոլոր աղբյուրները.
- Յուրաքանչյուր բնությունից առաջ տեղեկանալ տպագիր և էլեկտրոնային գրականության, սարքավորումների, բանաձևերի թույլատրելի ցանկի մասին.
- Իրազեկ լինել ակադեմիական անազնվության դրսևորման արդյունքում պատասխանատվության կրելու մասին.
- Մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի վերանայման գործընթացին:

4. Ակադեմիական ազնվության խախտման պատժամիջոցներ

Միականանազնվությունը բացահայտման պարագայում՝

Յուրաքանչյուր նյութ, որի նկատմամբ այն բացահայտվել է, համարվում է անվավեր, դանխարգելվում է այդ նյութի ստեղծման և տարածման ընթացքը.

Եթե ուսանողը խախտել է ակադեմիական ազնվության հայեցակարգը որևէ ավարտական կամ ամփոփիչ աշխատանք ներկայացնելիս, նա առարկայական մեկ չափանիշով ստանում է նվազագույն միավոր՝ զրո, իսկ աշխատանքը վերադարձվում է վերանայման.

Ուսանողը նոր նյութ է ներկայացնում: